ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՍԱՐՔԵՐԻ (ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ) ԵՎ ԹՎԱՅԻՆ ՏԱՐՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Կարգավորման առարկա

1. 1. Սույն փաստաթուղթը սահմանում է «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Յուքոմ) կողմից սպառողներին վաճառվող սարքերի (սարքավորումների) և թվային տարր պարունակող ապրանքների (այսուհետ՝ Ապրանք կամ Սարք) վաճառքի ընդհանուր դրույթներն ու պայմանները, ինչպես նաև սպառողների իրավունքները՝ համաձայն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք):

1. 2. Սույն փաստաթուղթը չի տարածվում Յուքոմի կողմից որպես էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող իրավաբանական անձ՝ բացառապես էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման միջոց ծառայող, իր կողմից տրամադրված սարքերի վրա /ռաուտորներ, wi fi սարքեր և այլն/ :

1. 3. Սույն փաստաթուղթը տարածվում է Յուքոմի կողմից Վաճառքի և սպասարկման կենտրոն(-ներ)ում կամ Յուքոմի կայքում հրապարակված առցանց խանութում՝ վաճառվող սարքերի վաճառքի հետ կապված իրավահարաբերությունների վրա:

2. Սահմանումներ

2. 1. **Յուքոմ կամ վաճառող**՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիաների և թույլտվությունների հիման վրա ՀՀ-ում հանրային էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և մեդիա ծառայություններ մատուցող ընկերություն, ինչպես նաև ապրանքներ և սարքավորումներ վաճառող կամ մատակարարող իրավաբանական անձ:

2. 2. **Վաճառքի և սպասարկման կենտրոն(-ներ)**՝ Յուքոմի կողմից առաջարկվող Ծառայությունների և Սարքավորումների վաճառքի և Բաժանորդների սպասարկման համար մասնագիտացված կենտրոն(-ներ) կամ խանութներ:

2. 3. **Սպառող՝** ֆիզիկական անձ, որը հանդես է գալիս և գործում է իր առևտրային գործունեության, գործարարության, արհեստի կամ մասնագիտական գործունեության շրջանակներից դուրս:

2. 4. **Արտադրող**՝ իրացման համար ապրանքներ արտադրող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ:

2. 5. **Ապրանք**՝ քաղաքացիական իրավունքի օբյեկտ, այդ թվում՝ գույք, աշխատանք, ծառայություն, որը նախատեսված է իրացման համար:

2. 6. **Ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերություն**՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) անհամապատասխանությունը նորմատիվ փաստաթղթերին, ՀՀ օրենսդրության պահանջներին, պայմանագրի պայմաններին կամ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին սովորաբար ներկայացվող պահանջներին:

2. 7. **Ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի էական խախտում**՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին առաջադրվող պահանջների էական խախտումներ (չվերացվող, ինչպես նաև այնպիսի խախտումներ, որոնք չեն կարող

վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո, և նման բնույթի այլ խախտումներ), որոնց դեպքում սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ հրաժարվելու պայմանագիրը կատարելուց և պահանջելու վերադարձնել ապրանքի (աշխատանքի, ծառայության) համար վճարված գումարը կամ պահանջելու ոչ պատշաճ որակի ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) փոխարինել պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով (աշխատանքով, ծառայությամբ):

2. 8. **Երաշխիքային ժամկետ**՝ ժամանակահատված, որի ընթացքում ապրանքի (աշխատանքի) թերության հայտնաբերման դեպքում արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է բավարարել Օրենքով սահմանված սպառողի պահանջները:

2. 9. **Թվային տարր պարունակող ապրանք՝** ապրանք, որը ներկառուցված կամ փոխկապակցված է թվային բովանդակության կամ թվային ծառայության հետ այնպես, որ տվյալ թվային բովանդակության կամ թվային ծառայության բացակայությունը կհանգեցնի տվյալ ապրանքից պահանջվող գործառույթների իրականացման անհնարինության:

3. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3. 1.Յուքոմը պարտավոր է սպառողին հանձնել այնպիսի սարք, որի որակը համապատասխանում է Սարքի/Սարքավորման վրա կամ Սարքի/Սարքավորման հետ արտադրողի կողմից տրամադրված կամ Յուքոմի կողմից հրապարակված պայմաններին:

3. 2. Յուքոմը պարտավոր է սպառողին հանձնել այնպիսի սարք, որը պիտանի է այն նպատակներին, որոնց համար նման սարքը սովորաբար օգտագործվում է:

3. 3. Եթե ապրանքի, որակի նկատմամբ նորմատիվ փաստաթղթերով սահմանված են պարտադիր պահանջներ, ապա Յուքոմը պարտավոր է սպառողին հանձնել այդ պարտադիր պահանջներին համապատասխանող ապրանք:

3. 7. Կնքված առք ու վաճառքի պայմանագրին համապատասխան՝ Յուքոմի կողմից սպառողին հանձնվող ապրանքը, սարքը (սարքավորումը) պետք է համապատասխանի Օրենքով սահմանված պարտադիր պահանջներին, հաշվի առնելով Օրենքով նախատեսված բացառությունները:

4. ԹՎԱՅԻՆ ՏԱՐՐԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. 1. Յուքոմը թվային տարրերով ապրանքների վաճառքի դեպքում պարտավոր է ապահովել, որ սպառողը տեղեկացված լինի և հնարավորություն ունենա ստանալու անհրաժեշտ թարմացումները, այդ թվում՝ անվտանգության թարմացումները և դրանց նշանակության վերաբերյալ տեղեկությունը, որոնք անհրաժեշտ են ապրանքի համապատասխանության պահպանման համար Օրենքով սահմանված ժամանակահատվածի ընթացքում:

4. 2. Թվային տարր պարունակող ապարանքների ֆունկցիոնալության վերաբերյալ տեղեկությունը նախատեսվում է արտադրողի կողմից տրամադրված ուղեցույց-ների/շահագործման ուղեցույցների, հրահանգների շրջանակում, որոնց բովանդակության համար Յուքոմը պատասխանատվություն չի կրում: Յուքոմը մատչելի եղանակով այդ տեղեկությունը հասանելի է դարձնում Սպառողին:

5. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՄԱՆ ԲԵՌԸ

5. 1. Յուքոմը, Օրենքի համաձայն, սահմանում է իր հետ կնքվող առք ու վաճառքի պայմանագրերով նախատեսված ապրանքների, սարքերի (սարքավորումների), այդ թվում՝ թվային բովանդակությամբ ապրանքների համար առնվազն երկու տարվա երաշխիքային ժամկետ, որի ընթացքում այդ ապրանքի, սարքի (սարքավորման) անհամապատասխանության հայտնաբերման դեպքում պարտավորվում է բավարարել սպառողի՝ Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված պահանջները: Բացառություն են կազմում Յուքոմի կողմից վաճառվող այն ապրանքները և սարքավորումները, որոնց համար՝ իրենց բնույթով պայմանավորված, երաշխիքային ժամկետ չի կարող սահմանվել: Մասնավորապես՝ իրենց բնույթով պայմանավորված երաշխիքային ժամկետ չի կարող սահմանվել այն ապրանքների համար, որոնք արտադրողի կողմից արտադրվել են առանց երաշխիքային ժամկետի կամ արտադրողը երաշխիքային ժամկետ է տրամադրել երկու տարուց պակաս ժամկետով կամ Յուքոմի կողմից ապրանքը Սպառողին է տրամադրվել առանց երաշխիքային ժամկետի, իսկ սպառողը համաձայնել է դրան, որը հավաստվում է Երաշխիքային կտրոնում վերջինիս ստորագրության առկայությամբ:

5. 1. 1. Աքսեսուարների (օրինակ՝ լիցքավորիչ, մկնիկ, power bank և այլն) դեպքում երաշխիքային սպասարկման առավելագույն ժամկետը 1 (մեկ) տարի է՝ կախված ապրանքի տեսակից, տեխնիկական առանձնահատկություններից:

5. 2. Յուքոմի սահմանած երաշխիքային ժամկետի ընթացքում ապրանքի, սարքի (սարքավորման) թերության հայտնաբերման դեպքում սպառողն իրավունք ունի Յուքոմին ներկայացնել պահանջներ, որոնց բավարարման կարգն ու ժամկետները, ինչպես նաև Յուքոմի պատասխանատվությունը սահմանվում են կողմերի միջև կնքված պայմանագրով և/կամ այլ փաստաթղթերով:

5. 3. Յուքոմն օգտագործված ապրանքի, սարքի (սարքավորման) համար իրավունք ունի սահմանելու առավել կարճ երաշխիքային ժամկետ, որը սակայն չի կարող պակաս լինել, քան մեկ տարին՝ սույն փաստաթղթի 5. 1 կետերի պահանջների պահպանմամբ:

5. 4. Սպառողների կյանքի, առողջությանը և գույքի համար վտանգ ներկայացնող ապրանքների, սարքերի (սարքավորումների) իրացման (աշխատանքի կատարման) համար Յուքոմը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

6. 1. Յուքոմը պարտավոր է ժամանակին սպառողին տրամադրել ապրանքների, սարքերի (սարքավորումների) (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ճիշտ ընտրության հնարավորությունը՝ հիմք ընդունելով Օրենքի և ՀՀ կառավարության «Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների տեղեկատվության բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվությունն սպառողին հասցնելու կարգը սահմանելու մասին» 07.11.2002 թվականի N 1923-Ն որոշման պահանջները:

6. 2 Յուքոմի վաճառքի և սպասարկման կենտրոններում և առցանց խանութում, այդ թվում՝ կայքում հնարավորություն է ընձեռնված բոլոր սպառողներին ծանոթանալու սույն փաստաթղթին և սույն փաստաթուղթը ընդունելու համար հիմք հանդիսացած

Օրենքի դրույթներին (հղում՝ https://www.arlis.am/hy/acts/226867/latest) և Յուքոմն ապահովել է նշված վայրերում սպառողների իրավունքների ու Օրենքով սահմանված դրույթների հիման վրա բոլոր պահանջներին ծանոթանալու սպառողների հնարավորությունը: Սույն փաստաթղթի հրապարակմամբ կամ սույն փաստաթղթին ծանոթանալու հնարավորության ապահովմամբ որևէ սպառող չի կարող վկայակոչել, որ Յուքոմի աշխատակիցները կամ Յուքոմի անունից հանդես եկող անձը չի ներկայացրել Օրենքի համաձայն սպառողին ներկայացման ենթակա տեղեկությունը:

7. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՅՈՒՔՈՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7. 1. Սպառողների իրավունքների խախտման համար Յուքոմը կրում է օրենքով և (կամ) պայմանագրով նախատեսված պատասխանատվություն:

7. 2. Յուքոմի կողմից սպառողին պատճառված վնասները ենթակա են հատուցման լրիվ չափով՝ չհաշված Օրենքով կամ պայմանագրով սահմանված տուժանքը (տուգանքը):

7. 3. Յուքոմի կողմից ենթակա է հատուցման աշխատանքի կամ ծառայության թերությունների հետևանքով պատճառված վնասը:

8. ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

8. 1. Յուքոմը պարտավոր է սպառողին հանձնել ապրանքային չեկ կամ գնման փաստը հավաստող այլ փաստաթուղթ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8. 2. Յուքոմը պարտավոր է սպառողից ընդունել ոչ պատշաճ որակի ապրանքը, իսկ անհրաժեշտության դեպքում կատարել ապրանքի որակի ստուգում, որին իրավունք ունի մասնակցել սպառողը:

8. 3. Ապրանքի թերությունների առաջացման պատճառների վերաբերյալ վեճի դեպքում Յուքոմը պարտավոր է ապրանքի փորձաքննությունը կատարել իր հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում:

8. 4. Յուքոմը պարտավոր է բավարարել սպառողի պահանջները, եթե չապացուցի, որ ապրանքի թերություններն առաջացել են այն սպառողին հանձնելուց հետո նրա կողմից ապրանքի օգտագործման, պահման կամ փոխադրման սահմանված կանոնները խախտելու, երրորդ անձի գործողությունների կամ անհաղթահարելի ուժի հետևանքով:

8. 5. Ապրանքի նորոգման, գնի իջեցման, փոխարինման համար սպառողի դիմելու դեպքում, եթե տվյալ ապրանքը մեծածավալ է և/կամ կշռում է հինգ կիլոգրամից ավելի, ապա նման ապրանքի տեղ հասցնելը և դրանք սպառողին վերադարձնելն իրականացվում են Յուքոմի ուժերով և հաշվին:

8. 6. Ապրանքի թերությունների վերաբերյալ սպառողի պահանջների Օրենքի խախտմամբ պահանջ ներկայացվելու դեպքում Յուքոմը պարտավոր է սպառողին անհապաղ գրավոր պարզաբանել ապրանքի անհամապատասխանության հայտնաբերման դեպքում պահանջների ներկայացման կարգը:

8. 7. Յուքոմը կրում է սպառողին ապրանքի, սարքի (սարքավորման) այդ թվում՝ թվային տարր պարունակող ապրանքի առաքման պահից մեկ տարվա ընթացքում ապրանքի ցանկացած անհամապատասխանություն հայտնի դառնալու պարագայում

ապրանքի անհամապատասխանության առաջացման պատճառների ապացուցման պարտականությունը:
8. 8. Յուքոմը պետք է վերացնի ապրանքում հայտնաբերված թերությունները առանց լրացուցիչ վճարման պայմանի՝ ապրանքի թերությունների վերացման վերաբերյալ սպառողի պահանջների ներկայացման օրվանից քսան օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ողջամիտ ժամկետում և առանց սպառողին որևէ զգալի անհարմարություն պատճառելու՝ հաշվի առնելով ապրանքի բնույթը և այն նպատակը, որի համար սպառողը պահանջել է այն:
8. 9. Յուքոմը պարտավոր է երկարատև օգտագործման ապրանքների նկատմամբ սպառողի կողմից նշված պահանջները ներկայացնելուց հետո՝ նորոգման ընթացքում, յոթնօրյա ժամկետում սպառողին անհատույց տրամադրել նմանօրինակ ապրանք՝ ապահովելով իր հաշվին տեղ հասցնելը:
8. 10. Յուքոմը սպառողի կողմից ապրանքի թերությունների հայտնաբերման և այդպիսի ապրանքի փոխարինման պահանջ իրեն ներկայացվելու դեպքում առանց լրացուցիչ վճարման պայմանի պարտավոր է փոխարինել այդպիսի ապրանքը նշված պահանջի ներկայացման օրից՝ յոթնօրյա ժամկետում, իսկ Յուքոմի կողմից այդպիսի ապրանքի որակի լրացուցիչ ստուգման անհրաժեշտության դեպքում՝ նշված պահանջի ներկայացման օրից՝ քսան օրվա ընթացքում:
8. 11. Ոչ պատշաճ որակի ապրանքը Յուքոմը պետք է փոխարինի նոր ապրանքով, այսինքն՝ չօգտագործված ապրանքով: Ապրանքի փոխարինման դեպքում Յուքոմը երաշխիքային ժամկետը հաշվարկում է նորից՝ ապրանքն սպառողին հանձնելու օրից սկսած:
8. 12. Առևտրային երաշխիքով հանձնված ապրանքի համար Յուքոմն առևտրային երաշխիքի ողջ ժամանակահատվածում ուղղակիորեն պատասխանատու է սպառողի առջև ապրանքների վերանորոգման կամ փոխարինման համար:
8. 13. Ոչ պատշաճ որակի ապրանքը նմանօրինակ մակնիշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինելիս Յուքոմը չի պահանջում հատուցել պայմանագրով նախատեսված ապրանքի գինը կամ չի պահանջում ապրանքը փոխարինել կամ չի պահանջում դրա մասին դատարանի վճիռը կայացնելու պահին գոյություն ունեցող գնի տարբերությունը:
8. 14. Յուքոմը պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինում կամ վերադարձնում է, եթե նշված ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը, սպառողական հատկանիշները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև սպառողին տրված վճարման փաստը հավաստող փաստաթուղթը կամ այլ հաշվարկային փաստաթուղթ, և առկա են ապրանքը հենց Յուքոմից ձեռք բերելու մասին ապացույցներ:
8.15. Սարքը (Սարքավորումը) ենթակա է վերադարձման Յուքոմի վաճառքի և սպասարկման կենտրոն Սպառողի կողմից՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ տարբերակով է Սպառողը Սարքը (Սարքավորումը) ձեռք բերել:

9. ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌԱԿԱ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

9. 1. Հեռակա և ձեռնարկության շենքից դուրս կնքվող պայմանագրերի դեպքում Յուքոմն առավելագույն դյուրին եղանակով մինչև պայմանագրի կնքումը, սպառողին է տրամադրում էլեկտրոնային ձևով լրացվող հաղորդագրության հետ կապակցված տվյալների օգտագործման կարգը, որոնց ամբողջությունը համարվում է ձեռագիր

ստորագրությանը համարժեք և հնարավորություն է ընձեռում նույնականացնելու էլեկտրոնային ձևով ստորագրող անձին ու արտահայտում է վերջինիս կամքը:
9. 2. Հեռակա պայմանագրերի դեպքում Յուքոմը կայուն կրիչի վրա հնարավորինս պարզ և ընթեռնելի ձևով սպառողին է ներկայացնում Օրենքով սահմանված տեղեկությունները կամ այդ տեղեկությունները հասանելի է դարձնում սպառողին հեռակա հաղորդակցության միջոցներին համապատասխան եղանակով:
9. 3. Բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի, սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության հրաժարվելու հեռակա կամ ձեռնարկության շենքից դուրս կնքված պայմանագրերից 14 օրվա ընթացքում, որը հաշվարկվում է Օրենքով սահմանված կարգով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Սարքը (Սարքավորումը) տրամադրվել է Յուքոմի կողմից (բաժանորդ մնալու պարտավորությամբ կան առանց նման պարտավորության) Յուքոմի ցանցով մատուցվող Ծառայությունները Սպառողին հասանելի դարձնելու համար:
9. 4 Սպառողն ընդունում և համաձայնվում է Օրենքի II.1 սահմանված տեղեկությունը Յուքոմը իրեն տրամադրել կամ տրամադրում է էլեկտրոնային եղանակով սույն փաստաթղթի 6. 2 կետով նախատեսված կարգով, իսկ Օրենքի մնացած դրույթներին սպառողը ծանոթացել է սույն հղումով՝ https://www.arlis.am/hy/acts/226867/latest :

10. Եզրափակիչ դրույթներ

10. 1. Ապրանքների, սարքերի (սարքավորումների) և թվային տարր պարունակող ապրանքների վաճառքի ու երաշխիքային սպասարկման հետ կապված ցանկացած հարց առաջանալու դեպքում սպառողներն իրավունք ունեն զանգահարել Յուքոմի 011 444 444 հեռախոսահամարին, գրել էլեկտրոնային նամակ (դիմում, բողոք, առաջարկ) 444@ucom.am հասցեով կամ այցելել Յուքոմի վաճառքի և սպասարկման կենտրոն(-ներ): Յուքոմի գլխամասային գրասենյակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, 0046, Հ. Մանանդյան 33/8 հասցեում:
10. 2 Սույն փաստաթուղթը համարվում է ապրանքների, սարքերի ընդհանուր դրույթներ և պայմաններ:
10. 3 Ապրանքների և սարքերի վճարման պայմանները հետևյալն են՝
- Կանխիկ՝ ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի չափով և պայմաններով,
- Անկանխիկ՝ ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության սովորույթներով ընդունելի ցանկացած կարգով և պայմաններով, այդ թվում՝ QR կոդի միջոցով,
- Բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպության կողմից ապրանքի ֆինանսավորման եղանակով վճարում (ապառիկի ձևակերպում, վարկային միջոցներով ապրանքի ձեռքբերում և այլն),
10. 4 Ապրանքների առաքման գինը կապված է տվյալ ապրանքից և առաքման հեռավորությունից: Առաքման մանրամասներին ծանոթանալու համար՝ անհրաժեշտ է անցնել հետևյալ հղումով՝ https://shop.ucom.am/am/ :
10. 5 Ապրանքի կամ սարքավորման պայմանագրից ձեռք բերողը կարող է հրաժարվել Օրենքով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:
10. 6 Ապրանքների և սարքավորությունների հիմնական բնութագրերը նշված են տվյալ ապրանքի կամ սարքավորման հետ ուղեկցող փաստաթղթերով, որից գնորդը նախապես ծանոթանում է տեղում, իսկ եթե ապրանքը վաճառվում է առցանց՝ տվյալ ապրանքի նկարագրության էջում:

10.7 Ապրանքների կամ սարքավորումների հետ կապված բոլոր վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային համաձայնությամբ, եթե սպառողը չի վկայակոչում այլ կարգով վեճերի լուծման կարգ:
Պայմանագրի շրջանակներում ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների, նոտարական պալատի կամ նոտարների ենթակայությունը, հանձնվելու է «Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատություն» հիմնարկին, եթե Սպառողի և Յուքոմի միջև կնքված Պայմանագրում կամ համաձայնագրում կամ կողմերի միջև սահմանված այլ փաստաթղթով այլ արբիտրաժային հաստատություն կամ վեճերի լուծման այլ կարգ սահմանված չէ:
Գործի քննությունն իրականացվում է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքին, ինչպես նաև Արբիտրաժային հաստատության կանոնադրությանը և կանոնակարգին (արբիտրաժային վերապահման կամ համաձայնության կնքման պահին գործող) համապատասխան:
Յուքոմը և Սպառողը սահմանում են, որ արբիտրաժի ընթացքում ցանկացած հաղորդակցություն և/կամ ծանուցում իրականացվում է, ինչպես նաև արբիտրների կազմը ձևավորվում է Արբիտրաժային հաստատության կանոնակարգին համապատասխան:
Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևանը:
Յուքոմը և Սպառողը պայմանավորվում են, որ վեճերի քննությունը կիրականացվի միայն գրավոր ընթացակարգով՝ ներկայացված փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա, եթե արբիտրաժային տրիբունալի որոշմամբ այլ բան սահմանված չէ: Արբիտրաժային հաստատության կողմից վեճերի լուծումն իրականացվում է՝ Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն:
10.8 Սույն փաստաթղթի պայմանները հանդիսանում են սպառողի հետ կնքվող պայմանագրի անբաժանելի մաս: Միաժամանակ, հստակության համար սահմանվում է, որ միայն ՀԴՄ կամ վճարումը հավաստող փաստաթղթի տրամադրումը, երաշխիքային կտրոնի հետ (առկայության դեպքում) հանդիսանում է Օրենքի իմաստով ապրանքների կամ սարքավորումների առքուվաճառքի կամ մատակարարման կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ տիպի պայմանագրի կնքում և չի կազմվում կողմերի երկկողմանի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով համապատասխան պայմանագիր: